

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 03/21**

ք. Գյումրի

«18» փետրվարի 2021 թ.:

«Ընտանիք» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանը, ի դեմս Մարգարիտ Արծրունյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի.

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն րանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինել՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1070960 /մեկ միլիոն յոթանասուն հազար ինը հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

¹⁷ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____ 2 _____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ 2 _____ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:²⁰ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

²⁰ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրահանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարժառիարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²¹

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

²¹ Պնտական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցևով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ

Ա/2 Մարգարիտ Արժրունյան

ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2

ք. Գյումրի Կրուպսկայայի փ 93

ՀՎՀՀ 05504412

ՀՎՀՀ 87321645

Հ/Հ 900018005554

Հ/Հ 1930045842260100

Երևանի թիվ 1 ՏԳԲ

«Կոնվերսանկ» ՓԲԸ

Ա. Մինասյան

Մ. Արժրունյան


(ստորագրություն)
Կ.Տ.


(ստորագրություն)
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՍԱ ՔԱՄԱՍԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ամսորոպ	միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (ԳՄՎ)	անվանումը և պարամետրին նշանը	տեխնիկական բնութագիրը	Ուսումնական ղեկավարի ղրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրեկական պիտույքների այլ պարագաներ	Ուսումնական ղեկավարի ղրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրեկական պիտույքների այլ պարագաներ	Ուսումնական ղեկավարի ղրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրեկական պիտույքների այլ պարագաներ	Ուսումնական ղեկավարի ղրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրեկական պիտույքների այլ պարագաներ	մատակարարման				
								հասցեն	ենթակա քանակն ըստ եռամսյակների			
								2	3	4	7	10
1	22850000	Արագակար պարույրով A4 ձևաչափ	Թղթապանակ-արագակար պարույրով, A4 ֆորմատի	հատ	500	15000	30	10	10	10	10	10
2	22850000	Արագակար կապրոն A4 ձևաչափ	Թղթապանակ-արագակար փափուկ պատիկ էյլոթից, առաջին էջը թափանցիկ A4 ֆորմատի, գունավոր	հատ	180	5400	30		20			10
3	22811100	Դասամատյան	Հաճախումների հաշվարման դասամատյան 12 էջ 70-80գ/քմ, կողը սպիտակ ստվարաթղթի, չափը՝ A4, տպագրությունը միագույն՝ սև	հատ	500	42500	85				85	
4	22811110	Դասատումների մատյան	Մատյանը նախատեսված է ուսումնական հաստատության տնօրենի, փոխտնօրենների և այլ պաշտոնյաների կողմից ուսուցիչների մոտ անցկացվող դասախոսումները գրանցելու համար	հատ	2000	4000	2				2	
5	22811170	Նշումների թուղթ/76.2սմ-76.2սմ/կապոն	Կապոն թերթիկներ նշումների համար: Կապոն, գունավոր, չափաները 76.2սմ - 76.2սմ, 100թղթի	հատ	150	1500	10		5		5	
6	22811170	Թուղթ նշումների	Կապոն թերթիկներ նշումների	հատ	100	1500	15		8		7	

16	30197648	Թուրք A4 110r/Սա	աշխատանքների համար: Քաշը 80 գր/մք, տուփի մեջ 500 հատ, ուլտրասափտակ	հատ	20	4000	200	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	50	12	10	50	100
17	30197638	Վատման /սպիտակ/ A1	Թուրք A4 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրանցելային աշխատանքների համար: Քաշը 110 գր/մք, 210x297 մմ սպիտակ	հատ	150	7500	50	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	12	10	16	16	16
18	30197232	Թղթապանակ ֆայլերով 60էջ A4 ֆորմատի	Թղթապանակ ցրցադրական, A4 ֆորմատի, 60էջ, թափանցիկ ֆայլերով	հատ	600	6000	10	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	10				
19	30141200	Հաշվիչ Citizen CT-500	Հաշվիչ "Citizen" CT-500, գրասենյակի հաշվիչ LCD թվային էկրան, 12 նիշ, կրկնակի գրո, հիշողության ֆունկցիա, տոկոս, քառակուսի արմատ	հատ	5500	11000	2	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	1				1
20	30197621	Թուրք ֆլիպպարտի 585x810մմ /20 թերթ/	Թուրք ֆլիպպարտի համար, 20 թերթ, անցքերով, հարմար է սթենդին ամրացնելու համար: Չափանքը 585x810մմ	հատ	2000	12000	6	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	3	1	2		
21	30192131	Մատիտ Ան ՀԵ	Մատիտ սև, տեսակը ՀԵ փայտե, վեցանկյուն կամ կլոր	հատ	80	16000	200	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	50	50	50	50	50
22	30192100	Ռետին	Քլորո տիպի գրագիտով գրվածքները ջնջելու համար:	հատ	100	15000	150	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	60	30	30	30	30
23	30192133	Սրիչ	Մետաղյա սրիչ մատիտ սրելու համար	հատ	130	19630	150	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	63	27	30	30	31
24	30197231	Ֆայլ 40մկմ	Թափանցիկ պոլիպրոպիլենային ֆայլեր. կողային անցքերով 40մկր A4 ֆորմատի	հատ	10	10000	1000	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	250	250	100	100	400
25	30197231	Ֆայլ 70մկմ	Թափանցիկ պոլիպրոպիլենային ֆայլեր. կողային անցքերով 70մկր A4 ֆորմատի	հատ	20	8000	400	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	100	100	50	50	150
26	30197220	Անրակ /100հատ/ 30մմ	Անրակ մետաղական, տուփի մեջ 100 հատ, պատրաստված բարձրորակ մետաղական լարից	տուփ	140	3500	25	Ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2	5	5	5	5	5

27	30197112	Կարիչի միջուկ 24/6	Կարիչի ասեղ, № 24/6, պատրաստված բարձրորակ պողպատից, փայտեփայրով 1000 հատով ստվարաթղթե սուպերում	սուպի	150	3000	20	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2	5		5	5	5
28	30197322	Կարիչ/առնակեր N24/6 HD 45	Կարիչ N24/6 HD-45: Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 30 թերթ մետաղալարե կապիկով անրացնելու համար	հատ	1350	2700	2	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2		2			
29	30197332	Ռակիչ	Մետաղական ռակիչ, 2 անցք բացելու հնարավորությամբ 20-30Էջ ղակելու հնարավորությամբ	հատ	2000	2000	1	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2		1			
30	30197340	Ապակարիչ	Մետաղական աշխատանքային մատով և պլաստմասսայե բռնակով գործիք՝ նախատեսված է կարկան թղթերը առանձնացնելու համար:	հատ	350	1750	5	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2		5			
31	30192121	Գրիչ կապույտ գնդիկավոր /Փ-0.7ձձ/	Կապույտ գնդիկավոր գրիչ, պլաստմանե իրանով 0,7ձձ	հատ	100	10000	100	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2	20	10	10	20	40
32	30192121	Գրիչ կարմիր գնդիկավոր /Փ-0.7ձձ/	Կարմիր գնդիկավոր գրիչ, պլաստմանե իրանով 0,7ձձ	հատ	100	5000	50	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2	10	10	10	10	20
33	30197234	Թղթապանակ կոճգամով A4 ձևաչափ	Ճորձատղ A4, թղթապանակ-ճրար կոճգամով, ամուր, հասար պլաստիկ	հատ	350	17500	50	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2	20	20			10
34	30197234	Թղթապանակ A4 /ռեզիստոր, 27X31սմ/	Թղթապանակ ռեզիստոր A4 ֆորմատի, երկօղակային, կողային հաստությունը 80 մմ, կազմը ստվարաթղթից, կազմի հաստությունը 2մմ	հատ	800	12000	15	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2	7			4	4
35	30199232	Շրար սպիտակ A4	Շրար A4, սոսինձվող շերտով: Նախատեսված է տարրեր փաստաթղթերի և նամակների փոստային փոխանցումների համար	հատ	60	1200	20	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2	20				
36	30199290	Շրար սպիտակ 115x225մմ	Շրար 115x225մմ, սոսինձվող շերտով: Նախատեսված է տարրեր փաստաթղթերի	հատ	30	600	20	բ. Գյումրի Անի բ. 11փ 5/2	20				

37	30199290	Ծրար սպիտակ 120X165մմ	և նամակների փոստային փոխանցումների համար:	Ծրար 120X165մմ սպիճվող շերտով: Նախատեսված է տարրեր փաստաթղթերի և նամակների փոստային փոխանցումների համար	հատ	40	800	20	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	20				
38	30192710	Մսխինձ չոր 22գ		Մսխինձ-մատիտ չոր, տարողությունը 22գր, ստանձում է թուղթ, սովաբաթուղթ, նկարներ	հատ	400	12000	30	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	10	5	5		
39	30197511	Սովաբաթուղթ տարբեր գույների /70սմ*100սմ/		1,8մմ հաստությամբ հատտ սովաբաթուղթ՝ Ծ1 ձևաչափի	հատ	700	17500	25	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	10	5			
40	30192930	Քողարկիչ /10սմ/		Ուղղիչ գրիչ, օգտագործվում է փոքր փխրվեղը ուղղելու համար 10սմ	հատ	250	3000	12	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	6		6		
41	30197646	Թուղթ A3 ուղղա սպիտակ A /500հատ/		Թուղթ A3 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Քաշը 80 գր/մք, տուփի մեջ 500 հատ, ուտրասպիտակ	տուփ	3500	3500	1	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	1				
42	30194320	Թուղթ նկարչական 25*35		Թուղթ նկարչական 25*35	հատ	20	10000	500	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	150	150		200	
43	30194320	Թուղթ զձագրության /10հատ/		Սպիտակ A4 ֆորմատի, նախատեսված զձագրման և էլեկտրոնի համար, 210X297մմ տուփի մեջ 10հատ, չշտամբավորված 200գ/Մա	տուփ	250	5500	22	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	7	4	3		
44	30192220	Ժապավեն կաջոն /սկոչ 19մմ*36մմ*40մմկմ/		Սկոչ փոքր 19մմ*36*40մմ գրասենյակային աշխատանքների համար: Մտնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ: ԳՕՍՍ 20477-86	հատ	80	800	10	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	3	5		2	
45	30192231	Ժապավեն կաջոն /սկոչ 48մմ*36մմ*40մմկմ/		Լայն սկոչ 48մմ*36*40մմ, գրասենյակային և փաթեթավորման աշխատանքների համար: Մտնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ	հատ	400	3200	8	Բ. Գյուլանի Անի ք. 11փ 5/2	2	2	2	2	

57	30192740	Թուղթ A4 գունավոր /210*297սմ/80գր /հատ 100	գր/ձք. գունավոր Թուղթ A4 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Քաշը 80 գր/ձք. գունավոր. տուփի մեջ 100 հատ	տուփ	1980	1980	1	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	1			
		Ընդամենը				375800						

Կերպարվեստի կյութեր

58	37821150	Կալիճ /100հատ/	Կալիճ գրատախտակին գրելու համար, գլանակալոր սպիտակ, տուփի մեջ 100հատ	տուփ	1000	15000	15	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	7	4	4	
59	37821150	Կալիճ գունավոր /10հատ/	Կալիճ գրատախտակին գրելու համար, գլանակալոր տարրեր գույների, տուփի մեջ 10հատ	տուփ	150	3750	25	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	10	10	5	
60	37821130	Մատիտ գունավոր /12գույն/	Գունավոր մատիտ .տուփի մեջ՝ 12 գույն, սրված	տուփ	750	45000	60	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	15	15	15	15
61	37821240	Կատման գունավոր B1 ձևաչափ /70սմx100սմ/	Կատման գունավոր B1 ֆորմատի, 220x240 գր/ՄԱ, չափեր 70x100սմ	հատ	400	12000	30	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	10	10	5	5
62	37821170	Յուղամատիտ / 24 գույն/	Յուղամատիտ ատանց շրջանակի, 24 գույն	տուփ	650	26000	40	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	10	10	10	10
63	37821190	Թուղթ կրկնօրինակման A4 ձևաչափ	Գունավոր կալյա: Թուղթ սև, կապույտ, նախատեսված է արտատպելու համար	հատ	10	110	11	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	11			
64	37821220	Քվիլինգի թուղթ /0.4մմ լայն.120գր.մ2 խտությամբ/ 50*0.9սմ 50 հատ	Քվիլինգի թուղթ /0.4մմ լայն.120գր.մ2 խտությամբ/ 50*0.9սմ 50 հատ	հավաքածու	350	3500	10	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	5			5
		Ընդամենը				105360						

Գահավորանք

65	39241210	Սկրատ գրասենյակային 13սմ	Բարձրորակ արդյատ, չժանգոտվող, կրողացված ծալերով հարմարավետ օգտագործման համար, չափեր 13 սմ	հատ	600	30000	50	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	10	14	15	11
66	39221440	Վրձին N3 /ջրաներկի/	Վրձին N3 /ջրաներկի/	հատ	250	7500	30	Քյուսիքի Անի ք. 11փ 5/2	15			15

67	39221440	Վրձին N10 /ցրաներկի/	Վրձին N10 /ցրաներկի/	հատ	480	14400	30	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	10	10	10			
68	39221440	Վրձին N1 /ցրաներկի/	Վրձին N1 /ցրաներկի/	հատ	170	5100	30	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	20			10		
69	39221440	Վրձին N2 /ցրաներկի/	Վրձին N2 /ցրաներկի/	հատ	200	6000	30	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	20			10		
70	39221440	Վրձին N5 /ցրաներկի/	Վրձին N5 /ցրաներկի/	հատ	250	7500	30	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	20			10		
71	39221440	Վրձին N 9/ցրաներկի/	Վրձին N 9/ցրաներկի/	հատ	400	12000	30	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	20			10		
72	39221270	Ջրաման 200գր /երկտեղ/	Պլաստիկ ջրաման 200գ /երկտեղ/	հատ	200	16000	80	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	20			20	15	25
73	39292530	Քանոն 30սմ մետաղական	Ուռիղ քանոն, գծաբաժանումներով, չրեֆոր մացիղ, առավելագույն երկարությունը, 30 սմ, մետաղական	հատ	250	2500	10	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	3			3	2	2
74	39292510	Քանոն 30սմ պլաստիկ	Թափանցիկ քանոն 30սմ, պլաստիկ	հատ	180	900	5	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	3					2
75	39292150	Կարկիռ	Պլասմանտ սրուբով հավաքածու, որում կա կարկիռ, կարկիռի գլխիկին համապատասխան մատիտ	սրուբ	500	1000	2	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	2					
76	39263520	Ամրակ սերմանկ 25նմ/12 հատ/	Ան կամ գունավոր մետաղական սերմանկ՝ ամրակներ 25նմ/սերմանկ 12 հատ/	սրուբ	360	3600	10	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	5					5
77	39224460	Եզրագծող սրվակ /պլաստիկ սրվակ 100նմ, մետաղական գլխիկով/	Եզրագծող սրվակ /պլաստիկ սրվակ 100նմ, մետաղական գլխիկով/	հատ	2200	4400	2	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	2					2
78	39241210	Սկրատ գրասենյակային մեծ 22սմ	Բարձրորակ պողպատ, չճանգուղիղ, կիրառված ծախերով հարմարավետ օգտագործման համար, չափեր 22սմ	հատ	850	4250	5	բ. Գյուլբի Անի բ. 11փ 5/2	4					1

79	39293100	Բանալու կախազարդ /սփտանակ/	6*2,2մ չափերով տարբեր գույների պատիկե կախազարդ/սփտանակ/ 2 կողմից անցքերով, 1 հատ մետաղական տրակով Փ. 15-20մմ, գրպանիկով, որում կարելի է դնել համապատասխան նշումներով թուղթ	հատ	70	700	10	Ք. Գյումրի Անի թ. 11ֆ 5/2	10				
80	39221300	Կտրբա ապակյա /միջին/ 0,5 l	Կտրբա ապակյա /միջին/ 0,5 l	հատ	850	10200	12	Ք. Գյումրի Անի թ. 11ֆ 5/2	12				
81	39221300	Կտրբա ապակյա /փոքր/ 0,2 l	Կտրբա ապակյա /փոքր/ 0,2 l	հատ	700	8400	12	Ք. Գյումրի Անի թ. 11ֆ 5/2	2	10			
ԸՆԴՀԱՆՈՒՄ													
Դրոշմեր													
82	35821400	Դրոշ ԸԸ 1*2 /մետաքսյա/	ԸԸ դրոշ մետաքսե կտորից, 1*2 /ետագույն/	հատ	5000	5000	1	Ք. Գյումրի Անի թ. 11ֆ 5/2	1				
ԸՆԴՀԱՆՈՒՄ													
Ներկեր, լաքեր և մածուցաններ /մատրիկաներ/													
83	44811200	Գուաշ 12 գույն gamma	Նկարչական բնույթի աշխատանքների համար նախատեսված ներկ, հավաքածու 12 գույնից, ապակյա ամանիկներով կամ պլաստմասսայե մածուկաշիկներով, քանակը 120 մլ, թանձր վիճակում:	տուփ	1750	42000	24	Ք. Գյումրի Անի թ. 11ֆ 5/2	8	4	4	4	4
84	44811600	Ջրաներկ 12 գույն gamma	Տուփի մեջ 12 գույն, պինդ նյութ, նախատեսված գունավորելու համար	տուփ	500	13500	27	Ք. Գյումրի Անի թ. 11ֆ 5/2	9			8	10
